

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՆԱԿՈՒ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ, ՎԱԶԱԳԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԼԵՆԱ ՆԱԽՆԱԶԱՐՅԱՆԻ, ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ, «ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ» ԱԶ-Ի, ԱՐՏԱԿ ԲԱԴԱԼՅԱՆԻ, ՄԱՐԻԵՏԱ ՆԱԽՎԵՐԴՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՂԱՐԻՔՅԱՆԻ, ՄԱՅԻՍ ՎԱՆՐԱԴՅԱՆԻ, ՍՊԱՐՏԱԿ ԶԱՔԱՐՅԱՆԻ, ՌՈԶԱ ՄԻՆԱՍՅԱՆԻ, ԲՈՐԻՍ ՎԱՆՅԱՆԻ, ՎԵՐՍԱՆԴԻԿ ՆԱԿՈՒՔՅԱՆԻ ԵՎ ՆԵՂԻՆԵ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ, ՇԱՄԻՐ ՄԱՐԴԱՆՅԱՆԻ, «ՎԱՐԴԱՆ ՍԵՐԳՈ» ՍՊԸ-Ի, ՇՈՂԻԿ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆԻ, ԳԵՂԵՑԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ, ՄԻՍԱԿ ՊՈՂԻԿՅԱՆԻ, ԽԱԶԻԿ ՆԱԶՅԱՆԻ, ՍՈՒՍԱՆՆԱ ՂԱՐԱՄՅԱՆԻ, ԺԵՆՅԱ ՆԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆԻ, ԱՐՈՒՍՅԱԿ ՓԱՅՏՅԱՆԻ, ԲԱԼԳԻԶԱՐ ՄԱՆՄԵԴՈՎԱՅԻ, ՄԱՆՎԵԼ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆՆԵՐԻ, ԴԱՎԻԹ, ՆՈՐԱՅՐ, ԿԱՐԻՆԵ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆՆԵՐԻ, ՄԱՅՐԱՆՈՒՇ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ, ԱՐՏՈ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 230 ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 231.1., 231.2. ՆՈԴՎԱԾՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

9 ապրիլի 2007թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների եւ նրանց ներկայացուցիչներ Վ. Սաֆարյանի, Վ. Խաչատրյանի, Լ. Նախնազարյանի, Ռ. Տեր-Վարդանյանի, Ժ. Նարությունյանի, Կ. Գրիգորյանի, Մ. Վահրադյանի, Ս. Զաքարյանի, Ռ. Մինասյանի, Բ. Վանյանի, Ա. Զոհրաբյանի, Կ. Մեժլումյանի, Շ. Մարդանյանի, Ն. Գալյանի, Շ. Նովհաննիսյանի, Ս. Սաֆարյանի, Բ. Մահմեդովայի,

գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ արդարադատության նախարարի պաշտոնակատար Դ. Նարությունյանի,

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 46 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանում ՆՏ վճռաբեկ դատարանի եւ ՆՏ գլխավոր դատախազի ներկայացուցիչներ Ա. Մկրտչյանի, Վ. Ռշտունու եւ Ն. Ենգոյանի,

համաձայն ՏՏ Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի եւ 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Նակոր Դանիելյանի, Վաչագան Խաչատրյանի, Լենա Նախնազարյանի, Թամարա Մկրտչյանի, «Կարեն Ղազարյան» ԱԶ-ի, Արտակ Բադալյանի, Մարիեփա Նախվերդյանի եւ Սամվել Ղարիբյանի, Մայիս Վահրադյանի, Սպարտակ Զաքարյանի, Ռոզա Մինասյանի, Բորիս Վանյանի, Վերսանդիկ Նակոբյանի եւ Նեղինե Ամիրխանյանի, Շամիր Մարդանյանի, «Վարդան Սերգո» ՍՊԸ-ի, Շողիկ Նովհաննիսյանի, Գեղեցիկ Առաքելյանի, Միսակ Պողիկյանի, Խաչիկ Նաջյանի, Սուսաննա Ղարամյանի, Ժենյա Նամբարձումյանի, Արուսյակ Փայրյանի, Բալգիզար Սահմեդովայի, Մանվել եւ Սվետլանա Նովհաննիսյանների, Դավիթ, Նորայր, Կարինե եւ Արթուր Նովհաննիսյանների, Մայրանուշ Սյրեփանյանի, Արտո Ալավերդյանի դիմումների հիման վրա՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի, 231.1., 231.2. հոդվածների դրույթների՝ ՏՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը վերոհիշյալ քաղաքացիների դիմումներն են սահմանադրական դատարան, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 39 հոդվածով, մինչեւ դատաքննությունն սկսվելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննվելու համար:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, սահմանադրական դատարանում ՏՏ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ Ա. Մկրտչյանի պարզաբանումները, հեփազոտելով ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՏՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը կոչված է կարգավորելու ՏՏ դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը եւ երաշխավորելու ՏՏ Սահմանադրությամբ, օրենքներով եւ իրավական այլ ակտերով նա-

խաբեւած՝ անձանց իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի դատական պաշտպանությունը:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի վիճարկվող դրույթները փոփոխվել, իսկ 231.1. եւ 231.2. հոդվածները, որպէս օրենսգրքի լրացումներ, ընդունվել են ՆՏ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հուլիսի 7-ին՝ ՆՕ-153-Ն օրենքով:

Դիմողները սահմանադրական դատարան են ներկայացրել ՆՏ վճռաբեկ դատարանի՝ վերջնական դատական ակտեր հանդիսացող որոշումներ, որոնցով սույն գործով դիմողների նկատմամբ կիրառվել են ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1. եւ 231.2. հոդվածների դրույթները, եւ վիճարկում են այդ դրույթների սահմանադրականությունը:

Սույն գործը սահմանադրական դատարանում քննության ընդունելուց հետո, ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. եւ 231.2. հոդվածները փոփոխվել եւ լրացվել են ՆՏ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված ՆՕ-98-Ն օրենքով: Նկատի ունենալով, որ օրենսգրքի հիշյալ հոդվածների փոփոխված եւ լրացված նորմերը վեճի առարկա նորմերի իրավական բովանդակությունը չեն փոխել, եւ այդ փոփոխությունների սահմանադրականությունը սույն գործով վեճի առարկա չէ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 26, 63 եւ 69 հոդվածների պահանջները, սահմանադրական դատարանը փոփոխությունների սահմանադրականության խնդրին չի անդրադարձել:

2. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածը (2006թ. հուլիսի 7-ի փոփոխություններով) սահմանում է.

«Հոդված 230. Վճռաբեկ բողոքի բովանդակությունը

1. Վճռաբեկ բողոքում պետք է նշվեն՝

1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) բողոք բերող անձի անունը (անվանումը).

3) վճիռ կայացրած դատարանի անվանումը, գործի համարը, վճռի կայացման փարին, ամիսը, ամսաթիվը, գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), վեճի առարկան.

4) բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ եւ նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, կամ որոնք են նոր երեսան եկած հանգամանքների հետեւանքով գործի վերանայման հիմքերը.

4.1) սույն օրենսգրքի 231.2 հոդվածի առաջին կետի որևէ ենթակետի հիմնավորումները.

5) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

2. Վճռաբեկ բողոքն սպորազրույթ է բողոք բերած անձը:

3. Բողոքին կցվում են սահմանված կարգով եւ չափով պետական փութի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը եւ բողոքի պարճները՝ գործը քննող դատարան եւ գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները»:

Դիմող կողմը գտնում է, որ վերոհիշյալ 230 հոդվածի 1-ին կետի դրույթները չեն համապատասխանում ՏՏ Սահմանադրության 3, 5, 6, 8, 18, 19, 31, 47 եւ 92 հոդվածներին:

ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) սահմանում է.

«Նոդված 231.1. Վճռաբեկ բողոքը վերադարձնելը

1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 230 հոդվածի եւ 231.2 հոդվածի առաջին կետի պահանջներին, կամ բողոքը բերել է այն անձը, որի իրավունքը չի խախտվել:

2. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում բողոքը ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

3. Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ կարող է սահմանել ժամկետ՝ թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար»:

Դիմող կողմը գտնում է, որ վերոհիշյալ 231.1. հոդվածի դրույթները չեն համապատասխանում ՏՏ Սահմանադրության 3, 6, 18, 19 եւ 47 հոդվածներին:

ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) սահմանում է.

«Նոդված 231.2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը

1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

1) վճռաբեկ դատարանի կողմից փվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտին, կամ

3) ստորադաս դպրարանի կողմից դադարակարգական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դարձած դադարակարգական սխալը կարող է առաջացնել ծանր հետեւանքներ, կամ

4) առկա են նոր երեւան եկած հանգամանքներ:

2. Վճռաբեկ դադարանին ներկայացված վճռաբեկ բողոքների՝ սույն օրենսգրքի 230 հոդվածի եւ սույն հոդվածի առաջին կետի պահանջներին դրանց համապատասխանությունը պարզելու եւ քննության ընդունելու հարցը լուծում է վճռաբեկ դադարանը՝ վճռաբեկ դադարանի նախագահի եւ պալատի դադարվորների կազմով:

3. Վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվում, եթե վարույթ ընդունելու օգտին քվեարկել են վճռաբեկ դադարանի դադարվորներից առնվազն երեքը: Վճռաբեկ դադարանի այդ որոշումը բողոքարկման ենթակա չէ:

4. Վճռաբեկ բողոքի լրացում չի թույլատրվում, բացառությամբ սույն օրենսգրքի 231.3 հոդվածով նախատեսված դեպքի:

5. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո վճռաբեկ դադարանը որոշմամբ կարող է կասեցնել դադարակարգական ակտի կատարումը:

6. Վճռաբեկ դադարանի որոշումները պարզաճանձեռով ուղարկվում են բողոք բերող անձին եւ գործին մասնակցող անձանց»:

Դիմող կողմը գտնում է, որ վերոհիշյալ 231.2. հոդվածի դրույթները չեն համապատասխանում ՏՏ Սահմանադրության 3, 6, 8, 14, 18, 19, 31 եւ 47 հոդվածներին:

3. Դիմողներն իրենց դիրքորոշումը հիմնականում պարճառաբանում են հետեւյալ փաստարկներով.

ա/ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու, պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դադարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Մինչդեռ, ՏՏ քաղաքացիական դադարակարգության օրենսգրքի վիճարկվող դրույթները ձեւակերպված ջիներով որոշակի, միատեսակ մարտչելի ու բավարար ճշտությամբ, չբխելով քաղաքացիական դադարակարգության մասին օրենսդրության ընդհանուր փրամաբանությունից, հնարավորություն չեն տալիս անձին դրանց համապատասխանեցնել իր վարքագիծը եւ դադարակարգական կարգով արդյունավետ պաշտպանել իր սահմանադրական իրավունքները: Ըստ դիմող կողմի՝ օրենսգրքի վիճարկվող

դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին նաև այն առումով, որ դրանցով չի սահմանվել վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունելու բավարար հստակ ձեւակերպված ընթացակարգ,

բ/ ՏՏ վճռաբեկ դատարանը լինելով եռաստիճան դատական համակարգի բարձրագույն դատական աստիճան, կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, ճիշտ մեկնաբանումը և իրավունքի զարգացումը, ինչպես նաև ուղղելու ստորադաս դատարանների թույլ տված սխալները: Մինչդեռ, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերը, ըստ դիմողների, ՏՏ վճռաբեկ դատարանին հնարավորություն են տալիս ձեւավորել այնպիսի դատական պրակտիկա, համաձայն որի՝ բողոքները վերադարձվում են առանց քննության (գործը վարույթ ընդունելու), անձանց բողոքներում առկա թերությունները մաքնանշելու և դրանք վերացնելու ժամկետ սահմանելու, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերը պարզաբանելու: Օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի, 231.1. և 231.2. հոդվածների դրույթների ձեւակերպումները, ըստ դիմողների, վճռաբեկ դատարանին օժտել են անկանխատեսելի հայեցողությամբ: Մասնավորապես, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում անհասկանալի է օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հստակ դիրքորոշումը, գործերի ընդունման կամ մերժման հարցերում դրսևորվող մոտեցման արդյունքում անհնարին է դառնում վճռաբեկ դատարանի իրավասությունների շրջանակներում անձանց՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իրավունքների պաշտպանությունը,

գ/ դիմող կողմի կարծիքով, օրենսգրքի վիճարկվող նորմերը պետք է ձեւակերպված լինեն այնպիսի որոշակիությամբ ու հստակությամբ, որ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս ստուգվեն ներկայացված փաստաթղթերի սուսկ ձեւին և բովանդակությանն առաջադրված պահանջների պահպանված լինելու հետ կապված հարցերը: Վեճի վերաբերյալ նյութաիրավական բնույթի հարցերին, մասնավորապես՝ բողոքը բերած անձի իրավունքների խախտված լինելու կամ չլինելու հարցին, դատարանը պետք է անդրադառնա միայն գործի արդարադատական ընթացակարգով ըստ էության քննության ժամանակ, որի արդյունքում է միայն հնարավոր պարզել դատական պաշտպանության դիմած անձի իրավունքների խախտված լինելու կամ չլինելու հանգամանքը,

դ/ դիմող կողմը գտնում է նաև, որ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերն ընդունելիս օրենսդիրն անտեսել է ՏՏ Սահմանադրության 3, 6, 18, 19 հոդվածների եւ, մասնավորապես՝ 47 հոդվածի պահանջը, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը եւ օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները եւ արժանապատվությունը»:

4. Առարկելով դիմող կողմի պնդումների դեմ՝ պարասխանող կողմը գտնում է, որ վեճի առարկա նորմերը համապատասխանում են ՏՏ Սահմանադրությանը: Ըստ պարասխանող կողմի՝ եվրոպական երկրներում դատական համակարգի զարգացման հիմնական միտումն այն է, որ գնալով ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների եռաստիճան համակարգում բարձրագույն աստիճանի հիմնական գործառույթը դառնում է օրենքի միատեսակ կիրառության ապահովումը: Դրան համապատասխան՝ փոխվում է նաև դատական այդ աստիճանի դերը բողոքների ընդունման եւ քննության հարցերում:

Միաժամանակ, պարասխանող կողմը մանրամասն անդրադառնալով դատական համակարգի զարգացման բնագավառում Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականներին, արեց այն հիմնական հետեւությունը, որ փարբեր մոտեցում է ցուցաբերվում դատական փարբեր աստիճանների իրավասությունների սահմանմանն ու դրանց իրականացման կարգերին, ընդ որում, երրորդ աստիճանի դատարան բողոքներ պետք է բերվեն առաջին հերթին այնպիսի գործերով, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միանման մեկնաբանմանը: Այդ շրջանակը կարող է նաև նեղացվել այն գործերի վերաբերյալ բողոքներով, որոնք առնչվում են իրավունքի այնպիսի հարցերի, որպիսիք ողջ հասարակության համար կարեւորություն են ներկայացնում:

Պարասխանող կողմը գտնում է, որ այս մոտեցումները բխում են նաև ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի դրույթներից, եւ հենց այդ մոտեցումներից ելնելով է, որ օրենսդիրը քաղաքացիական դատավարության օրենսգրքում կարարել է համապատասխան փոփոխություններ: Այդ փոփոխությունները ոչ թե վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու հարցում վճռաբեկ դատարանին օժտում են անսահմանափակ ազատությամբ, այլ նրան դատական փոխադրություն են վերապահում՝ գնահատելու վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայությունը: Վիճարկվող նորմերը որոշակի են ու հստակ, բխում են դատական

համակարգի բարեփոխումների հայեցակարգային մոտեցումներից, համարժեք են արդարադարական համակարգի եվրոպական զարգացումներին:

Պարասխանող կողմը միաժամանակ եզրակացնում է, որ վճռաբեկ դարարանի մակարդակում «...հիմնական կանոնը վճռաբեկ բողոքը չընդունելն է, իսկ բացառությունը՝ այն ընդունելը: Սա է Եվրոպայի, փաստորեն, այսօր որդեգրած քաղաքականությունը: Իսկ դա նշանակում է, որ երբ բացառությունը գործադրվում է, պետք է պարճառաբանվի հենց այն, թե ինչու բողոքն ընդունվեց, ոչ թե ինչու բողոքը չընդունվեց»:

Պարասխանող կողմի կարծիքով, անցումային առանձնահատկություններից ելնելով օրենսդիրը կարող է նպատակահարմար համարել նախատեսելու վճռաբեկ բողոքը պարճառաբանված մերժելու նորմատիվ պահանջ, սակայն դա սահմանադրականության խնդրին չի առնչվում:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դարարանը, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դարարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, անհրաժեշտ է համարում պարզել եւ գնահատել.

նախ՝ ՆՏ դարական իշխանության համակարգում վճռաբեկ դարարանի՝ ՆՏ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական փեղը եւ դերը,

երկրորդ՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու վճռաբեկ դարարանի սահմանադրական գործառնության բովանդակությունը եւ դրա իրացման երաշխավորումը ՆՏ քաղաքացիական դարավարության օրենսգրքի ինչպես վիճարկվող, այնպես էլ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված նորմերում եւ այդ նորմերի կարարումն ապահովող իրավական այլ ակտերում,

երրորդ՝ դարական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորվածությունը քաղաքացիական գործերով դարական ակտերի բողոքարկման գործող կարգում,

չորրորդ՝ ՆՏ քաղաքացիական դարավարության օրենսգրքի վիճարկվող նորմերում ՆՏ Սահմանադրության 18, 19 հոդվածներով, ինչպես նաև Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածում նախատեսված՝ անձի իրավունքների դարական պաշտպանության արդյունավետ միջոցի, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դարարանի կողմից ողջամիտ ժամկետում հրապարակային քննության իրավունքների, այդ առնչությամբ սահմանադրական այլ նորմերի պահանջների երաշխավորումը,

հինգերորդ՝ դափական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում արդարադատության արդյունավետության եւ անձի իրավունքների դափական պաշտպանության երաշխավորումը 2006թ. հուլիսի 7-ի օրենսդրական փոփոխություններում,

վեցերորդ՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերի կիրառման դափական պրակտիկան՝ այնքանով, որքանով առնչվում է դրանց՝ սույն գործով քննվող սահմանադրականության խնդրին,

յոթերորդ՝ ՏՏ Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

6. Պետական, այդ թվում՝ նաեւ դափական իշխանության մարմինների համակարգում ՏՏ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը որոշված է ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ «Նայասպանի Նանրապետության բարձրագույն դափական արյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միապետակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքով»: Նույն հոդվածի առաջին մասն ամրագրել է, որ «Նայասպանի Նանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին արյանի, վերաքննիչ դատարանները եւ վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ մասնագիտացված դատարաններ»: Միաժամանակ, ՏՏ Սահմանադրության 5, 91, 93, 94, 96 եւ 97 հոդվածներում ամրագրված են դափական իշխանության կազմակերպման ու գործունեության (արդարադատության իրականացման) հիմնարար դրույթները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետեւում է.

ա/ ՏՏ Սահմանադրությամբ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դափական գործառույթները փարանջապված են սահմանադրական արդարադատական գործառույթից, դրանց իրացումը նախատեսում է կառուցակարգային փարբեր լուծումներ եւ համարժեք լիազորություններ,

բ/ ընդհանուր իրավասության առաջին արյանի, վերաքննիչ դատարանները, վճռաբեկ դատարանը, ինչպես նաեւ մասնագիտացված դատարանները՝ դափական իշխանության շրջանակներում կազմում են գործառնական համակարգային ամբողջություն: Այդ համակարգը կառուցված է գործառնական ասփիճանակարգման եւ արդարադատական գործառույթների ներհամակարգային փարանջապման սկզբունք-

ներով, ներքեից վերել, ընդ որում, այդ աստիճանակարգում բարձրագույն դասական արյանը ՆՏ վճռաբեկ դատարանն է, որն ստորադաս դատարանների դասական ակտերը վերանայող դատարան է,

գ/ ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական եւ ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՆՏ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները,

դ/ ՆՏ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառույթը վճռաբեկության կարգով օրենքի միասնական կիրառությունն ապահովելն է, այսինքն.

- այն պետք է առաջին հերթին իրականացվի օրենքների եւ դրանց կատարումն ապահովող նորմատիվ այլ այնպիսի ակտերի իրավական բովանդակության մեկնաբանմամբ, որոնք ստորադաս դատարանների կողմից կիրառվել են (կամ չեն կիրառվել) դրանց փարաբնույթ իրավաընկալման արդյունքում,

- վճռաբեկության կարգով սահմանադրական իր վերահսկողական գործառույթի իրականացմամբ, ստորադաս դատարանների դասական ակտերը վերանայելիս եւ դասական սխալներն ուղղելիս վճռաբեկ դատարանը բացառապես պետք է լուծի իրավունքի իրացման հարցեր,

- որպես սահմանադրորեն նախատեսված շրջանակներում բարձրագույն դասական արյան՝ վճռաբեկ դատարանը, իր լիազորություններին համապատասխան, կոչված է երաշխավորելու ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված բոլոր դատարաններում մարդու իրավունքների ու ազատությունների դասական պաշտպանության արդյունավետ միջոցների, արդարության, հավասարության պայմաններում եւ ողջամիտ ժամկետում դատաքննության՝ անձի սահմանադրական իրավունքների անմիջական գործադրումը,

- վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթից է անմիջականորեն բխում ոչ միայն ընդհանուր եւ մասնագիտացված ստորադաս դատարանների թույլ տված դասական սխալներն իր իրավասության շրջանակներում ուղղելը, այլեւ այդ դատարանների կողմից կիրառված նորմատիվ ակտերի (դրանց դրույթների) միասնական ընկալման վերաբերյալ իրավական դիրքորոշում արտահայտելը:

7. Ելնելով վերոհիշյալ հետեւություններից եւ գործի հանգամանքներից, սահմանադրական դատարանը կարելոքում է, թե կառուցակարգային ինչպիսի երաշխիքներ եւ ընթացակարգեր են նախատեսված գործող օրենսդրության ակտերում ապահո-

վելու համար վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթի իրականացումը, բացահայտել քննության առարկայի շրջանակներում դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման երաշխավորվածությունը քաղաքացիական գործերով դատական ակտերի բողոքարկման գործող օրենսդրական կարգում:

«Դատարանակազմության մասին» ՆՏ օրենքի 21 հոդվածի համաձայն (13.06.2000թ. ՆՕ-72, 11.09.2001թ. ՆՕ-213 և 07.07.2006թ. ՆՕ-156-Ն փոփոխություններով) վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, ճիշտ մեկնաբանությունը և նպաստել իրավունքի զարգացմանը: Վճռաբեկ դատարանն իր իրավասության սահմաններում և դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով վերանայում է ստորադաս դատարանների դատական ակտերը: Միաժամանակ, նույն հոդվածով սահմանված են վճռաբեկ դատարանի կառուցվածքը և կազմը:

Վերոհիշյալ իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ ՆՏ վճռաբեկ դատարանի գործունեության՝ օրենքով նախանշված նպատակները պայմանավորված են այդ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակով: Օրենքի միատեսակ կիրառությունը, ճիշտ մեկնաբանությունն ապահովելը՝ որպես նաև իրավունքի զարգացմանը նպաստելու միջոցներ, կառուցակարգային փոխկապակցված գործառույթներ են, հետապնդում են իրավաչափ նպատակներ և երաշխիք են վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու ընթացակարգային լիազորությունների իրականացման համար: Այդպիսի երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացում:

ՆՏ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՌ-652 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մարչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարելու է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմարիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հարկապես

միջազգային այն պարավորությունների շրջանակներում, որպիսիք Նայասրանի Նանրապետությունն սրանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարելի է այդ պարավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մարչելիության եւ, հարկապես՝ դարական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Սահմանադրական դարարանը սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավանորմների սահմանադրականությունը որոշելիս անհրաժեշտ է համարում նաեւ ուշադրություն հրավիրել հարկապես դարական բողոքարկման հիմնախնդիրների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականների վրա: Այդ Կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների առջև, մասնավորապես, դրված են հետեւյալ պահանջները.

նախ՝ դարական վեճի հարցերն սկզբունքորեն պետք է լուծվեն առաջին արյանի դարարանում, իսկ օրենքը պետք է պարավորեցնի րվյալ դարարանին այնպիսի հարակությանը եւ ամբողջական հիմնավորումներով կայացնել որոշում, որ կողմերի համար ակնհայտ լինի հետագա բողոքարկման իրենց իրավունքից օգրվելու նպարակահարմարությունը,

երկրորդ՝ հարակ պահանջ պետք է առաջադրվի բողոքի հիմքերի եւ իրավական պաշարանության միջոցների հիմնավորման հարցում, երկրորդ արյանի դարարանին վերապահելով լիազորություն՝ պարճառաբանված մերժելու ակնհայտ անհիմն բողոքների քննության ընդունումը,

երրորդ՝ երկրորդ արյանի դարարանում շեշտը պետք է դնել հիմնականում բողոքի առարկայի շրջանակներում դարաքննության վրա,

չորրորդ՝ երրորդ արյանի դարարանում բողոքները պետք է վերաբերեն այնպիսի գործերի, որոնք բխում են այդ դարական արյանի դերից, օրինակ, այնպիսի գործեր, որոնք «...կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միարեսակ մեկնաբանմանը: Այդ շրջանակը կարող է սահմանափակվել այնպիսի գործերով բողոքարկումներով, որոնք առնչվում են ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերին» (հողվ. 7): Դիմողից պետք է պահանջվի հիմնավորել, թե ինչով է իր գործը նպաստելու հասնել այդ նպարակներին:

Միջազգային պրակտիկան վկայում է նաեւ, որ այդ նախապայմանների խարացումը չպետք է րեղի ունենա անհամաչափ՝ անճանց համար սրեղծելով իրավունքների պաշարանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ

վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրոեն նախատեսված, հստակ, եւ անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք եւ պարտականություն:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման օրենսդրական ընթացակարգով պետք է լիարժեք պաշտպանելի լինեն անձի՝ առանց բացառության բոլոր, այդ թվում՝ նաեւ քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, որը, ըստ դիմող կողմի՝ բավարար երաշխավորված չէ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերում:

Վերոհիշյալ խնդրին անդրադառնալով՝ սահմանադրական դատարանը նաեւ կարելի է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը եւ կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, որն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունը նաեւ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով: ՏՏ Սահմանադրության փոփոխություններով, ինչպես նաեւ արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների դատական պաշտպանության լիարժեք երաշխավորման իրավաչափ նպատակներով պայմանավորված 2006 թվականի հուլիսի 7-ի (ՏՕ-153-Ն) օրենսդրական փոփոխությունները՝ կապված ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով նախատեսված դատական բողոքարկման կարգի հետ, իրականացվել են միայն վճռաբեկ դատարանի գործառույթների շրջանակում, վերաբնիչ դատարանի գործող կարգավիճակի պայմաններում, առանց համապատասխան անցումային դրույթների: Դրա արդյունքում առանձին անձինք գործնականում զրկվել են դատական ակտերի բողոքարկման՝ օրենքով նախատեսված նախկին կարգով սկսված եւ դեռեւս չավարտված գործընթացի պայմաններում իրենց սահմանադրական իրավունքներն արդյունավետ պաշտպանելու լիարժեք հնարավորությունից: Ինչպես բխում է Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականից, դատական համակարգի առաջին, երկրորդ եւ երրորդ աստիճաններում ոչ միայն գործառնական լիազորությունները, այլեւ դրանց իրականացման կարգը, մասնավորապես՝ բողոքարկման արդյունավետ ինստիտուտի արմատավորումը, դիտարկվում են միասնական օրգանական կապի մեջ:

9. Անդրադառնալով ՏՏ վճռաբեկ դատարանի կարգավիճակով պայմանավորված օրենսդրական լիազորությունների եւ դրանց իրացման ընթացակարգերի սահմանադրաիրավական գնահատմանը, սահմանադրական դատարանը կարելուորում է սույն գործով վիճարկվող նորմերում ՏՏ Սահմանադրության 18, 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի եւ դրա արդյունավետ իրացումն ապահովող ու, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով կարելուորված՝ որոշակիության, մաքսչելիության եւ արդյունավետ միջոցների իրավական չափորոշիչների երաշխավորվածության հարցը, որով է նաեւ դիմող կողմը պայմանավորում վճռաբեկ վարույթում իր իրավունքների պաշտպանության արդյունավետությունը:

Սահմանադրական դատարանը ելնում է նաեւ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի մայիսի 12-ի R (2004) 6 հանձնարարականում ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ հանձնարարականի հետեւյալ դրույթներից, համաձայն որոնց.

- անդամ երկրները պետք է արդյունավետ ընթացակարգեր նախատեսեն ըստ էության քննության առնելու եւ լուծում փալու մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ դատական բողոքներին,

- բողոքների ընդունման եւ քննության ընթացակարգերը պետք է դիտարկվեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համապետքսպում,

- ներպետական համակարգերում դատական բողոքները պետք է հանգամանալից ու հիմնավոր քննության առարկա դառնան,

- Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանությունն ազգային իրավական համակարգում պետք է արդյունավետ ձեւով երաշխավորված լինի,

- իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները պետք է ներառեն նաեւ խելամիտ ժամկետներում դատաքննության ապահովումը:

Նաշվի առնելով նաեւ վերոհիշյալ մոպետցումները, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1. եւ 231.2. հոդվածների նորմերի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանը ելնում է ՏՏ վճռաբեկ դատարանում իրավասու անձանց վճռաբեկ բողոքների քննության ընթացակարգային կանոնների օրենսդրական այնպիսի կանոնակարգման անհրաժեշտությունից, որոնք, օրինական նպատակ հետապնդելով հանդերձ, լինեն միակերպ ընկալելի եւ մաքսչելի՝

ապահովելու համար այդ նպատակի եւ կիրառվող միջոցների միջեւ արդար հավասարակշռությունը: Միաժամանակ, վճռաբեկ բողոքների քննության ընթացակարգային կանոններն արդարացիորեն կարող են պարունակել միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք պայմանավորված են ՆՏ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառնության բովանդակությամբ, կապված ոչ թե մասնավոր, այլ՝ «...ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերի», «...օրենքի միատեսակ մեկնաբանման», դատական գործերով փաստական առանձնահատուկ հանգամանքների, դրանց գնահատման խնդրի, նյութական եւ ընթացակարգային իրավանորմների ճիշտ կիրառումն ապահովելու հետ:

10. Ելնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումներից, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1., 231.2. հոդվածների վիճարկվող նորմերը կոչված են կարգավորելու վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց եւ ՆՏ վճռաբեկ դատարանի միջեւ ծագող իրավահարաբերությունները՝ կապված վճռաբեկ բողոքի բովանդակության, այդ բողոքն ընդունելու կամ վերադարձնելու հետ: Տիշյալ նորմերը բնութագրվում են դատավարական նորմեր են եւ իրենց ընդհանուր բովանդակությամբ պայմանավորված են ՆՏ վճռաբեկ դատարանի՝ սահմանադրաիրավական կարգավիճակով եւ անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխավորման անհրաժեշտությամբ: Դրանցից էլ բխում է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածին համապատասխան՝ ստորադաս դատարանների վճիռների դեմ բերված վճռաբեկ բողոքներով գործերը քննելու եւ օրենսգրքի 226, 227 հոդվածներում նախանշված նյութական եւ դատավարական իրավունքի նորմերի խախտումների արդյունքում դատական սխալն ուղղելու՝ վճռաբեկ դատարանի իրավասությունը:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածը սահմանում է վճռաբեկ բողոքում պարտադիր բովանդակելի տեղեկությունները եւ կցվող փաստաթղթերը, ինչպես նաեւ օրենսգրքի 231.2. հոդվածի առաջին կետի ենթակետերով նախատեսված որեւէ հիմնավորման անհրաժեշտությունը: Փաստորեն, 230 հոդվածի նորմերով վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց առջեւ դրված են հետեւյալ պարտականությունները.

- բողոքում նշել իրավաբանական նշանակություն ունեցող պարտադիր տեղեկություններ եւ կցել փաստաթղթեր,
- ներկայացնել հիմնավորումներ.

ա/ օրենքի միապետակ կիրառման համար գործով կայացվող դատական ակտի էական նշանակության մասին,

բ/ վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտին վերանայվող դատական ակտի հակասող լինելու մասին,

գ/ դատական սխալի արդյունքում ծանր հետեւանքների առաջացման հնարավորության մասին,

դ/ գործով նոր երեւան եկած հանգամանքների առկայության մասին:

Այսպիսով, օրենսդրորեն հստակեցված են իրավական այն պայմանները, որոնց առկայության դեպքում է միայն իրավասու սուբյեկտի (այդ թվում՝ քաղաքացու) դիմումը (վճռաբեկ բողոքը) ճանաչվում իրավաչափ, եւ այն սահմանված կարգով ներկայացվելու ձեւով դրսեւորված կամաարտահայտման արդյունքում է միայն ՏՏ վճռաբեկ դատարանն իրավասու գործադրել սահմանադրաիրավական կարգավիճակից բխող օրենսդրական իր լիազորությունները:

ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի վերոհիշյալ նորմատիվ պայմանները սահմանադրական դատարանի գնահատմամբ նպատակ ունեն ոչ թե անձանց ծանրաբեռնել ձեւական պահանջներով, այլ պայմանավորված են վճռաբեկ դատարանի՝ օրենքի միապետակ կիրառությունն ապահովելու գործառույթով:

Ինչպես նշվեց, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականում հապուկ շեշտվում է, որ վճռաբեկ վարույթում բողոքները պետք է վերաբերեն այնպիսի գործերի, որոնք, բխելով դատական փոփոխության կարգավիճակից, կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միապետակ մեկնաբանմանը: Այդ բողոքարկումները կարող են սահմանափակվել նաեւ այնպիսի գործերով, որոնք առնչվում են ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերին, ուստի դիմողից պետք է պահանջվի հիմնավորել, թե իր գործն ինչով է նպաստելու հասնել այդ նպատակին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՏՏ վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք, այլ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան պարզել ու գնահատել բողոքատու անձանց փաստարկների բնույթը, իրավական նշանակությունը եւ կայացնել պարճառաբանված որոշում: Վճռաբեկ վարույթում բողոքատու անձանց առջեւ ՏՏ վճռաբեկ դատարանի կարգավիճակով պայմանավորված իրավական պահանջների առաջադրումը՝ կապված բողոքի բովանդակության, դրա հիմնա-

վորման եւ ներկայացման կարգի հետ, իրենց հիմնական բովանդակությամբ փարբերվում են վերաքննիչ վարույթում գործող կարգից: Այդ պահանջներն առնչվում են իրավունքի, դրա մեկնաբանման ու իրացման, այլ ոչ թե փաստերի ձեռքբերման, նախնական հերազուրման ու գնահատման հետ: Ուստի վճռաբեկ դատարանի կողմից «էական նշանակություն», «ծանր հետեւանք» եւ «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» արտահայտությունների՝ դատական գործերի հանգամանքներից բխող բովանդակային հստակացումը, մեկնաբանումը, պարզառաբանումը պայման է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետում եւ 231.2. հոդվածի 1-ին կետում նախանշված հիմքերին համապատասխան՝ վճռաբեկ վարույթում անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունը կանխատեսելի դարձնելու համար:

11. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. եւ 231.2. հոդվածների վիճարկվող նորմերով, ինչպես նշվեց, սահմանված են վճռաբեկ բողոքը վերադարձնելու, վարույթ ընդունելու հետ կապված կանոնները, մասնավորապես՝ բողոքն ընդունելու, վերադարձնելու եւ լրացնելու, այդ մասին վճռաբեկ դատարանի որոշում կայացնելու դեպքերը, կարգը, եւ այդպիսի որոշումների ծանուցման, ինչպես նաեւ վիճարկվող դատական ակտի կասեցման կարգը եւ պայմանները: Այդ նորմերով ՆՏ վճռաբեկ դատարանն օժտված է ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններով, մասնավորապես.

- պարտավոր է վերադարձնել վճռաբեկ բողոքը, եթե այն չի համապատասխանում օրենսգրքի 230 հոդվածում նախանշված բովանդակային պահանջներին կամ չի պարունակում 231.2. հոդվածի առաջին կետի որեւէ հիմնավորում,

- պարտավոր է բողոքն ընդունել վարույթ, եթե այն բովանդակում է օրենսգրքի 231.2. հոդվածի առաջին կետի որեւէ հիմնավորում,

- պարտավոր է վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու մասին կայացնել որոշում եւ պարզաճ ձեռով ուղարկել այն բողոք բերող անձին եւ գործին մասնակցող անձանց,

- կարող է բողոքը վերադարձնելու մասին իր որոշմամբ սահմանել ժամկետ՝ թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար,

- կարող է կասեցնել վիճարկվող դատական ակտի կատարումը:

Միաժամանակ, օրենսդիրը ՆՏ վճռաբեկ դատարանի հայեցողությանն է վերապահել ամեն մի կոնկրետ դեպքում օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերի առկայության գնահատումը:

ՆՏ վճռաբեկ դատարանի վերոհիշյալ լիազորությունների պարտադիր եւ հայեցողական բնույթի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ պետախիշիսանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, այդ թվում՝ նաեւ ՆՏ վճռաբեկ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՆՏ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ: Տվյալ դեպքում՝ ՆՏ վճռաբեկ դատարանը, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի պահանջները կատարելու, վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու առնչությամբ ժամկետ սահմանելու կամ վիճարկվող դատական ակտի կատարումը կասեցնելու հետ կապված իր հայեցողական լիազորություններով պարտադրված է ընտրելու օրենքով առաջադրված հնարավոր իրավաչափ լուծումներից որեւէ մեկը: Ընդ որում, ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1. եւ 231.2. հոդվածների վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը բողոքների ընդունման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելիս առաջնորդվել է ՆՏ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի օրենսդրական ապահովման ու այդ դատական արյանի արդարադատական, այդ թվում՝ նաեւ հայեցողական լիազորությունների իրացման երաշխավորման անհրաժեշտությամբ:

Այսուհանդերձ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համակարգային բարեփոխումների ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաեւ անցումային համակարգերին բնորոշ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են իրավագիտակցության դեռուս ցածր մակարդակը, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման անբավարար աստիճանը, համակարգային անկատարությունները, կոռուպցիոն ռիսկը եւ այլն: Ներեւաբար, իրավակարգավորման առանցքային խնդիրներից են, մասնավորապես, Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական, իրավական պետության կայացման նախադրյալների ապահովումը, սահմանադրական ժողովրդավարության ամրապնդումը, Սահմանադրության հիմնարար արժեքների ու սկզբունքների իրացման օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքների ստեղծումը, դատական իշխանության անկախության ու անկողմնակալության նկատմամբ հասարակության անդամների վստահության ամրապնդումը եւ այլն: Պատահական չէ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասով սահմանադրական դատարանից պահանջվում է, որպեսզի նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս հաշվի առնվի նաեւ մարդու եւ քաղաքացու՝ Սահ-

մանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովվածությունը, պետական եւ փրեզիդենտական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնավար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը եւ այլն: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրորեն նախատեսված պետաիշխանական ցանկացած բնույթի լիազորություն (այդ թվում՝ հայեցողական) անհրաժեշտ նպատակ հետապնդելու հետ մեկտեղ, պետք է ուղեկցվի վերջինիս հասնելու հասարակական հարաբերությունների կոնկրետ առանձնահատկություններով պայմանավորված իրավական, չափավոր միջոցներով, փոխադրյալ դեպքում՝ պարտադիր հաշվի առնելով նաեւ ՏՏ Սահմանադրության 3 հոդվածում, 47 հոդվածի առաջին մասում ամրագրված հիմնարար սկզբունքների անխախտելիությունը: Մասնավորապես, վճռաբեկ վարույթում բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ոչ միայն վճռաբեկ բողոքի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելը, այլեւ բողոքը վերադարձնելու պարճառաբանման նորմարիվ պահանջի սահմանումը: Դրա բացակայության հետեւանք է, որ գործով ուսումնասիրված՝ վճռաբեկ դատարանի թե՛ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու եւ թե՛ վերադարձնելու մասին որոշումներում ըստ էության չեն փրվում պարճառաբանություններ:

Միաժամանակ, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի վիճարկվող 3-րդ կետում կիրառված «թերություններ» արտահայտության հարակ ըմբռնելի բովանդակությունը սահմանելը, բողոքափու անձանց կողմից վճռաբեկ բողոքն օրենսգրքի 230 հոդվածի պահանջներին ըստ ձեւի համապատասխանեցնելու պայմանները, կարգը եւ ժամկետն օրենսդրորեն հարակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կփու վճռաբեկ վարույթում առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթը՝ 10-օրյա ժամկետում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պարճառաբանման նորմարիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշ-

ռության, որոշակիության, իրավահավասարության եւ իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պարտադրանքանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարելու է երաշխիք է ինչպես արդարադատության մարչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Ներկայումս, ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պարտադրանքանված պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից, նկատի ունենալով Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված ՆՏ դատական օրենսգրքով դատական ակտերի բողոքարկման կարգի հայեցակարգային փոփոխությունը եւ այդ օրենսգրքի դրույթների ուժի մեջ մտնելու՝ օրենքով նախատեսված փարաժամկետ պայմանները, ՆՏ դատական օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահից դատական բողոքարկման հետ կապված իրավահարաբերություններ կարգավորող օրենսդրության որոշ ակտեր ուժը կորցրած ճանաչելու, դատավարական նոր օրենսգրքեր ընդունելու՝ օրենքով նախատեսված պայմանները, ինչպես նաեւ ՆՏ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված օրենքով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. եւ 231.2. հոդվածների փոփոխություններն ու լրացումները, ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Նայասպանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի դրույթները համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

3. Նայասպանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ).

ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ժամկետ սահմանելու առումով, համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը,

բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պարճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետեւաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մարչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. Նայասպանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի դրույթները համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

5. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաճայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

9 ապրիլի 2007 թվականի
ՄԴՈ-690